ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/130

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ֆաէռիքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 21.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.05.2021թ. թիվ 26/26-1/7875-2021 գրությամբ «Ֆաէռիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1.<u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.05.2021թ. թիվ ՊՆ/02/2553-2021 գրության հիման վրա, 18.05.2021թ. թիվ 26/26-1/7875-2021 գրությամբ նախաձեռնել է «Ֆաէռիքս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ֆաէռիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

«Ֆաէռիքս» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ պաշտպանության նախարարության գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Ֆաէռիքս» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2021/130 ծածկագրով ընթացակարգը:

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 12.05.2021թ.-ին ստորագրված գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր): Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի հայտը մերժվել է, քանի որ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը /բոլոր հավելվածները/ էլեկտրոնային ստորագրվել են ընկերության տնօրենը չհանդիսացող անձի կողմից, սակայն հայտում բացակայում էր ընկերության տնօրենի կողմից այդ անձին տրված լիազորագիրը:

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. Պատվիրատուն 09/04/2021թ.-ին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) և www.armeps.am էլեկտրոնային համակարգում Պատվիրատուն հրապարակել է թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մասնակիցը Մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացրել էր հայտ (այսուհետև նաև՝ Հայտ):

1.2. Մրցույթի հայտերի բացման նիստը նշանակված էր 20.04.2021թ.-ի ժամը 11:00-ին: Հայտերի բացման՝ 20.04.2021թ.-ի ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ արձանագրություն Տեղեկագրում չի հրապարակվել և չի ուղարկվել Մասնակցին:

1.3. Հայտում արձանագրված «անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը (այսուհետև նաև՝ Ծանուցում) Մասնակիցը էլեկտրոնային

փոստի միջոցով ստացել է 29.04.2021-ին: Ծանուցմամբ նշված էր որ. « (…) Ձեր կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը /բոլոր հավելվածները/ էլեկտրոնային ստորագրվել են ընկերության տնօրենը չհանդիսացող անձի կողմից, սակայն հայտում բացակայում է ընկերության տնօրենի կողմից այդ անձին տրված լիազորագիրը՝ հայտով ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասություն ունենալու վերաբերյալ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Շտկված տարբերակն անհրաժեշտ է ուղարկել գնահատող հանձնաժողովի քարտուղարի t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին»:

1.4. Հայտը ստորագրել է Հայկանուշ Աբդունուրյանը, վերջինիս տրված լիազորագիրը հայտում չի բեռնվել տեխնիկական վրիպման պատճառով:

1.5. Մասնակցի հայտում «անհամապատասխանություններ» արձանագրելու և մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ որոշումները արձանագրվել են՝ 29.04.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ: Ընդ որում՝ թիվ 3 արձանագրությունը Մասնակցին չի ուղարկվել իսկ Տեղեկագրում հրապարակվել է 11.05.2021թ.-ին:

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք).

33-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 4-րդ կետի, 3-րդ մասի 5-րդ կետի և 8-րդ մասի համաձայն՝

«1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: (…):

2. Հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, (…): Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: (...) սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:»:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ).

41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

26-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համահամաձայն՝ Գնահատող հանձնաժողովի՝ գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը:

Վերոգրյալից նորմերից հետևում է, որ հայտերի բացման նիստի օրը և ժամին հրավիրվում է հայտերի բացման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի նիստ: Հանձնաժողովի նիստերը պարտադիր կերպով ենթակա են արձանագրման, այսինքն՝ յուրաքանչյուր նիստի, այդ թվում՝ հայտերի բացման, վերաբերյալ անհրաժեշտ է կազմել արձանագրություն, որը ստորագրում են գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը: Հայտերի բացման նիստում, ի թիվս Օրենքով սահմանված այլ գործողությունների, գնահատող հանձնաժողովը գնահատում է մասնակիցների ներկայացրած հայտերի համապատասխանությունը տվյալ գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին: Եթե գնահատման արդյունքում Մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի

պահանջների նկատմամբ, ապա հայտերի բացման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվում է և նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը ծանուցում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նշյալից հետևում է, որ հրավերում նշված հայտերի բացման նիստի օրը գնահատող հանձնաժողովը գնահատում է մասնակիցների հայտերը և, եթե հայտերում արձանագրվում են հրավերի պայմանների նկատմամբ անհամապատասխանություններ, ապա գնահատող հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվում է և հանձնաժողովի քարտուղարը հրավերում նշված հայտերի բացման նիստի օրը արձանագրված անհամապատասխանության մասին ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Ուստի, եթե հայտերի բացման նիստի օրը մասնակիցը չի ծանուցվում իր հայտում հրավերի նկատմամբ տեղ գտած անհամապատասխանության վերաբերյալ, ապա վերջինիս մոտ առաջանում է օրինական ակնկալիք առ այն, որ իր ներկայացրած հայտը համապատասխանում է տվյալ գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին: Որպիսի պայմաններում, ելնելով որոշակիության սկզբունքից՝ հայտերի բացման նիստից հետո մասնակցի հայտում հրավերի նկատմամբ անհամապատասխանություններ պետք է չարձանագրվեն:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով (ՍԴՈ-1142, ՍԴՈ-1148, ...) արտահայտված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրինական ակնկալիքների իրավունքի և որոշակիության սկզբունքները իրավական պետությունում՝ որպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ենթակա են պաշտպանության, այդ մոտեցումը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Մրցույթի հայտերի բացման նիստը նշանակված էր 20.04.2021թ.-ի ժամը 11:00-ին: Հայտում հրավերի նկատմամբ տեղ գտած անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցում հայտերի բացման նիստի օրը՝ 20.04.2021թ.-ին Մասնակիցը չի ստացել: Որպիսի պայմաններում մասնակցի մոտ առաջացել է օրինական ակնկալիք, որ իր հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին: Ուստի, ՀՀ

սահմանադրական դատարանի որոշումներով (ՍԴՈ-1142, ՍԴՈ-1148, ...) արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ այդ ակնկալիքները Հայաստանի Հանրապետությունում ենթակա են պաշտպանության, որը պետք է դրսևորվի Ընթացակարգը մերժելով, քանի որ Մասնակցի հայտում արձանագրված «անհամապատասխանության» վերաբերյալ ծանուցումը Մասնակցին ուղարկվել է՝ հայտերի բացման նիստին հաջորդող 9-րդ օրը: Այսինքն՝ Պատվիրատուն չպահպանելով՝ ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 41-րդ կետով սահմանված նորմերը դրսևորել է կամայականություն՝ խախտել է իրավական ակնկալիքների իրավունքի և որոշակիության սկզբունքները, ինչի արդյունքում Մասնակիցը հայտնվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առաջ: Ուստի, ելնելով իրավական պետությունում օրինական ակնկալիքների իրավունքի և որոշակիության սկզբունքների պաշտպանության անհրաժեշտությունից կարծում ենք, որ սույն Ընթացակարգը անհրաժեշտ է մերժել:

Ավելին, մինչև այսօր հայտերի բացման՝ 20.04.2021թ.-ի նիստի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի արձանագրությունը և 29.04.2021թ.-ի թիվ 3 արձանագրությունը Մասնակիցը չի ստացել: հայտերի բացման՝ 20.04.2021թ.-ի նիստի վերաբերյալ արձանագրությունը նաև հրապարակված չէ Տեղեկագրում իսկ 29.04.2021թ.-ի թիվ 3 արձանագրությունը Տեղեկագրում հրապարակվել է 11.05.2021թ-ին: Այսպիով, գնահատելով Մրցույթի նիստերի վերաբերյալ արձանագրությունները կազմելուն և արձանագրությունները ուղարկելուն ուղղված Պատվիրատուի գործողությունները և անգործությունը կարող ենք փաստել, որ Պատվիրատուն խախտել է Կարգի 26-րդ կետի 2-րդ, 5-րդ ենթակետերը և Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 4-րդ կետը, 3-րդ մասի 5-րդ կետը և 8-րդ մասը:

Ցանկանում ենք նաև նշել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մի շարք որոշումներ, որտեղ Կարգի 41-րդ կետի խախտմամբ կազմակերպված գնման գործընթացների շրջանակներում Ցուցակում մասնակցիներին ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մերժել է:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտ է կիրառել սույն դիրորոշման մեջ նշված Բողոքներ քննող անձի նախկինում կայացրած որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները և մեկնաբանությունները, ու Մասնակցին Ցուցակում ներառելու Ընթացակարգը մերժել:

Բացի այդ, հարկենք համարում նշել, որ Հայկանուշ Աբդունուրյանը Հայտը ստորագրելու համար ունեցել համապատասխան լիազորություններ, այդ մասին է վկայում 02.11.2020թ-ին մեկ տարի ժամկետով վերջինիս տրված լիազորագիրը:

Ամփոփելով վերոգրյալ փաստական և իրավական հանգամանքները կարծում ենք, որ Ընթացակարգի շրջանակներում Մասնակիցը Ցուցակում ներառման ենթակա չէ:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Ֆաէռիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2021/130 ծածկագրով ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/130 ընթացակարգի շրջանակներում 24.05.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.05.2021թ. թիվ ՊՆ/02/2553-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ՖԱԷՌԻՔՍ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից

արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը /բոլոր հավելվածները/ էլեկտրոնային ստորագրվել են ընկերության տնօրենը չհանդիսացող անձի կողմից, սակայն հայտում բացակայում էր ընկերության տնօրենի կողմից այդ անձին տրված լիազորագիրը՝ հայտով ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասություն ունենալու վերաբերյալ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և 29. 04. 2021թ ծանուցել Մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում (30.04.2021թ) Մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը 03.05.2021թ. մերժել է «Ֆաէռիքս» ՍՊԸ հայտը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/130 ընթացակարգի շրջանակներում 24.05.2021թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/130 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/130 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆաէռիքս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 03.05.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Ֆաէռիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ:

3. ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 12.05.2021թ. գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2021թ. թիվ 26/26-1/7875-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.05.2021թ. թիվ ՊՆ/02/2553-2021 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆաէռիքս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ***<u>03.05.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Ֆաէռիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ:</u>***

<u>ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 12.05.2021թ. գրությամբ:</u>

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-23/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը, որի համաձայն Ընկերության հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է

03.05.2021թ.,՝ արձանագրում եմ, որ «Ֆաէռիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել ***03.05.2021թ***., մինչդեռ Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին ***12.05.2021թ.,*** որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու՝ Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է

անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը: Ընդ որում, օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտ, հետևաբար՝ տվյալ դեպքում հինգ աշխատանքային օր ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ֆաէռիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.05.2021թ. թիվ 26/26-1/7875-2021 գրությամբ «Ֆաէռիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**